




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Մ Ի Ա Ս Ն Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՍՏԱՏՎՈՐՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ
ԴՊՐՈՑՆԵՐԻ

(ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑ)

(ԲԱՂԱՔ ՅԵՎ ԳՅՈՒԳ)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИИ
ЛЕНИНА
Ленинград
СССР

2-րդ ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՎՐԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՍԵԿՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ

Վ Ր Ա Ց Պ Ե Տ Հ Ր Ա Տ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

1931

374

Մ-67

374

Մ-67

0120-631-M
250
159

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ.

Մ Ի Ա Ս Ն Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՍՏԱՎԱԿՈՐՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ
ԴՊՐՈՑՆԵՐԻ

(ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑ)

(ՔԱՂԱՔ ՅԵՎ ԳՅՈՒՂ.)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТОЯННОЙ
ЛЕНИНСКИИ НАУК
СССР

2-րդ ՎԵՐԱՄՇԵԿԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՎԱԾ Ե ՎՐԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ՄԵՔՈՂԱԿԱՆ
ՍԵԿՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ

Վ Ր Ա Ց Պ Ե Տ Հ Ր Ա Տ
Թ Ի Ֆ Լ Ի Ս
1931

C 31-1
250

28 JUN 2013

52.315



58848-67

1931

2-я типография Госиздата Грузии, ул. Ленина, № 3.

Главлит 70.

Заказ 1083.

Тираж 3000

1. ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

Հասակավորների համեմատական տարրական դպրոցների
խնդիրները

«Սոցիալիստական շինարարությունն ու կուլտուրական հեղափոխությունը, ՍՍՀՄ-ի ինդուստրացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը և դրա հետ միասին դասակարգային թշնամիների կատաղի դիմադրությունը քաղաքում և մասնավոր գյուղում պահանջում են սոցիալիզմի շինարարության տևիվ մասնակիցների միլիոնավոր կազմեր: Այս ամենը սուր կերպով դնում է մեր առաջ՝ անդրադիտության և կիսագրագիտության լիկվիդացիան դարձնել հասարակա-քաղաքական դաստիարակության, քաղաքական-լուսավորության, մասսաների դասակարգային կովի կազմակերպության ու սոցշինարարության մի հզոր գործիք» (անգրագիտության վերացման IV համագումարի բանաձևից): Կիսագրագետների դրպրոցի հիմնական նպատակն է՝ ստեղծել սոցիալիզմի ակտիվ և գիտակից շին-րարներ: Այստեղից ել հետևում է այն, թե ինչ կազմակերպչական դեր է կատարելու դպրոցը արդյունաբերության և գյուղատնտեսության 5-ամյա պլանի իրագործման մեջ, ինչպես ամբողջ ՍՍՀՄ-ի, նույնպես և սովորող բանվորի ձեռնարկության և կոլտնտեսության նկատմամբ, կոլտնտեսության շարժման զարգացման, կուլակի դեմ անհաշտ կռիվ մղելու, նոր կեն-ցաղ ստեղծելու մեջ և այլն:

Սովորողի հասարակա-քաղաքական և արտադրական գործնեյության անհրաժեշտ տեխնիկական ունակությունները պետք է վերցնել իբրև ոժանդակ, բայց առանձնապես արժեքավոր տարր նրանց աշխատանքների մեջ: Դպրոցական ամբողջ աշխատանքի և ծրագրի մեջ պետք է մտցնել հետևյալ հիմնական մոմենտները.

1. Հեղափոխական շարժման նոր վերելքը և ինտերնացիոնալ դաստիարակությունը:

2. ՍՍՀՄ-ի և տվյալ ձեռնարկության ու կոլտնտեսության սոցշինարարության 5-ամյա պլանը և դպրոցի ու առանձին սովորողի մասնակցությունը այդ շինարարությանը:

3. Միջազգային դրությունը, Կարմիր Բանակը և յերկրի ինքնապաշտպանության կարողությունը:

4. Պրոկետարիատի դիկտատուրան սովյալ հտապում և բանվոր դասակարգի կապը գյուղացիութեան հիմնական մասսաների հետ (կոլտնտեսը իբրև խորհրդային իշխանութեան նեցուկ):

5. Դասակարգային կռիվը սոցիալաբարոյութեան շրջանում:

6. Հակակրօնական դաստիարակութեան:

7. Կուսակցութեանը և դպրոցի դերը ջրավոր-բատրակ մասսաներին և կուսակցութեան շարքերը քաշելու խնդրում:

Ում համարել կիսագրագետ

Տարեցտարե աճում և բանվոր-գյուղացիական լայն խավերի ակտիվութեանը, դրա հետ միասին բարձրանում և նրանց ընդհանուր կուլտուրական մակարդակը, բարձրանում և անընդհատ նաև նրանց գրագիտութեան աստիճանը:

Հասակավոր բանվորների և գյուղացիների աշխատանքի և կյանքի պայմանների ծայրահեղ բազմազանութեանը դարձնում և նրանց գրագիտութեան տեսակետից չափազանց խալտարդետ: Յեւ, յի՛թե քիչ թե շատ հեշտ եր վորոշել անգրագիտների թիվը, ապա չափազանց դժվար և ճշտել այն հարցը, թե ովքեր են կազմելու հասակավորների հանրակրթական տարրական դպրոցների (կիսագրագետների) հիմնական սովորողները: Այդ հարցի լուծումից և կախված դպրոցի ընդհանուր ուղղութեանը, ինչպես նաև ծրագրերի ու դասագրքերի բովանդակութեանը:

Վերջին տարիների կիսագրագիտական դպրոցների փորձը դրսևորել և կիսագրագետների հետևյալ յերկու տիպը.

1. Լիկկայաններ վերջացնողները և նույնպիսի պատրաստութեան տեղ ինքնուսանները (պակաս ունակութեան տեղ խմբակներ):

2. Նրանք, վորոնք կիսատ են թողել տարրական դպրոցը կամ ավարտել են վաղուց և մոռացել են գրագիտութեանը. նաև նման պատրաստութեան տեղ ինքնուսանները (քիչ թե շատ բարձր ունակութեանների տեղ խմբակներ):

Սոցիալիստական վերակառուցման և կուլտուրական հեղափոխութեան հետևանքով փոխվել և նաև կիսագրագետների տիպը այն մտքով, վոր նրանց ընդհանուր դարգացման և տեխնիկական ունակութեանը ևրի մակարդակը և այդ կիսագրագետներն են կազմում կիսագրագիտական դպրոցների հիմնական կադրերը: Դպրոց կազմակերպելիս առաջին հերթին պետք և ընդունել պակաս ունակութեանների տեղ բանվորներին (առաջին կարգերի): Այդպիսիներին դպրոց քաշելը առաձնապես արժեքավոր և այն տեսակետից, վոր նրանք բանվոր դասակարգի նոր և յետամնաց տարրերն են, տարրեր, վոր իրենց յետամնացութեամբ խոչընդոտ են հանդիսանում սոցիալիստական շինարարութեան:

Հասակավորների հանրակրթական տարրական դպրոցների ուսուցման ժամանակի մասին

Ներկա ծրագիրը հաշված և 6 ամսվա վրա, հաշվելով ուսուցման շրջանը հոկտեմբերից—մայիս:

Ուսուցման ժամերի քանակը նախատեսվում և 6 ամիս, այսինքն 18 դեկադ, կամ 90 պարապմունք. որական 3 ժամ—տարեկան 270 պարապմունք:

Ծրագրի բովանդակությունը

Հանրակրթական այս նախնական դպրոցների խնդիրները, գրագիտութեան մակարդակը և ուսուցման ժամանակը վորոշում են արդեն ծրագրների բովանդակութեանը:

Ծրագիրը պարունակում և խորհրդային շինարարութեան ամենատարած խնդիրները չորս ստորաբաժանումներով.

1. Ժողովրդագրության վերակառուցումը և 5-ամյա պլանը:

2. «Անհրաժեշտ և գյուղատնտեսութեան արտադրութեանը բարձրացնել կոլեկտիվացման հիմունքներով»:

3. «Անհրաժեշտ և ամրապնդել խորհրդների իշխանութեանը՝ բանվոր դասակարգի, վորպես գյուղական աշխատավոր մասսաների ղեկավարի իշխանութեանը»:

4. «Խորհրդային Միութեանը—ամբողջ աշխարհի աշխատավորների սոցիալիստական հայրենիքն և»:

Այս չորս բաժինների վերնագրերն արդեն ցույց են տալիս, թե ինչ նպատակադրութեան են ունենալու այս բաժինների թեմաներն ու յենթաթեմաները:

Այս վերնագրերն ոգնելու յեն ղեկավարներին այս կամ այն հարցը մշակելիս բերել սովորողներին այն յեզրակացութեան, այն հիմնական դրութեաններին, ինչ վոր հիշված են բաժինների վերնագրերում:

Բացի սրանից այսպիսով վոր միայն ճշտվում և ծրագրային հարցերի նպատակադրութեանը, այլ առանձին ամփոփ բաժինները հեշտացում են աշխատանքի պարբերական հաշվառքը ամբողջ ուս. տարվա ընթացքում:

Ամեն մի բաժին ունի 3—4 թեմա, վորոնք և իրենց հերթին ստորաբաժանվում են 2—5 յենթաթեմաների (տես յենթաթեմաների ցանկը յերես 17):

Ամբողջ ծրագիրը պարունակում և 27 հարց. ամեն մեկը սրանցից ունենալու յե 1—5 պարապմունք: Ամեն մի հարց բղխում և բովանդակութեանից, վորը ցույց և տալիս, թե ինչ լուսաբանութեամբ և ինչ ծավալով և մշակվելու:

Ծրագրի հիմնական բաժինը առաջին բաժինն և՛ ժողովրդական տնտեսութեան վերակառուցումը և սոց. շինարարութեան 5-ամյա պլանը: Այս թեմայի մշակումը կատարելիս պետք և հաղորդել հիմնական տեղեկութեան:

ներ 5-ամյա պլանով նախատեսած մեր արդյունաբերության աճի, պրոֆմիությունների, արտադրության ինդուստրացման և ռացիոնալիզացիայի մասին (տես այս բաժնի II, III և IV թեմաները): Հիշած հարցերի ծանոթությունը պետք է կատարել մանրամասն մշակելով արդյունաբերության այն ճյուղը, վոր ամենատարածվածն է այդ ռայոնում: Մյուս ճյուղերի մասին պետք է ընդհանուր ծանոթություն տալ: Կարելի է կա հավասարապես մանրամասն մշակման յենթարկել ծրագրի միջ հիշած արդյունաբերության բոլոր ճյուղերը, ուսումնական աշխատանքը չծանրաբեռնելու համար: Նույնը պետք է ասել նաև բնակչության հարստությունների մասին, վորոնք հում նյութ են ծառայում արդյունաբերության համար:

Չպետք է խորացնել ռայոնների տնտեսական մանրամասն ուսումնասիրությունը. անհրաժեշտ է միայն ծանոթացնել այն ռայոններին, վորոնք կապված են ռայոնի տարածված արդյունաբերության հետ և համառոտակի ընդհանուր գծերով տալ տեղեկություններ արդյունաբերության զլխավոր տեսակների հետ կապված մյուս ռայոնների մասին:

«Պրոֆմիությունը — կոմունիզմի դպրոցն է» բաժնի թեմաները մշակելիս պետք է լուսաբանել պրոֆմիությունների արտադրական և կուլտուրական աշխատանքները՝ իր անդամներին աշխատանքի պահպանությունը, նրանց նյութական-իրավական շահերի պաշտպանությունը, ձեռնարկության արտադրական կյանքի մեջ քաշելը, հասարակական աշխատանքին մասնակից անելը: Այս հարցերի ծանոթությունը պետք է սկսել ուսումնասիրելով տեղական պրոֆմիութենական կյանքը, նրա կոնկրետ ձևերը: Դրանից հետո անցնել ընդհանուր պրոֆմիութենական աշխատանքներին: Անհրաժեշտ է նոր կառուցված Փարբիկաների և գործարանների ու հանքի վերասարքավորման որինակներով մշակել չորրորդ թեմայի առաջին յենթաթեման: Այդ թեմայի միջոցով պարզել, թե ինչ նշանակություն ունի յերկրի համար արդյունաբերության և գյուղատնտեսության ինդուստրացումը:

Յերկրի ինդուստրացումը պետք է լուսաբանվի, վորպես սոցիալաբարության հիմնական, վճռական խնդիրներից մեկը:

Վոչ պակաս կարևոր են ելեկտրիֆիկացիայի, գների իջեցման ու կոպերացիայի խնդիրները: Այս հարցերը պահանջում են ղեկավարից խնամոտ նախապատրաստություն: Հիշած թեմաների մշակումը պետք է կատարվի սերտ կապված կուսակցության և խորհրդային իշխանության (կենտրոնի և տեղերի) համապատասխան միջոցառումների հետ:

Գրքի հիմնական նյութին պետք է կցել վորպես լրացուցիչ լրագրական նյութեր՝ նույն տեղի սոցիալաբարության խնդիրների մասին: Առաջին բաժնի թեմաները մշակելիս անհրաժեշտ է պարզել պրոլետարիատի ղեկավար դերը, խոշոր արդյունաբերության հարցը՝ իբրև մեր յերկրի սոցիալիզմի կառուցման հիմքը:

Յերկրորդ բաժնում անհրաժեշտ է կանգ առնել զլխավորապես հետևյալ թեմաների վրա՝ գյուղատնտեսության դանդաղ աճը արդյունաբերության համեմատությամբ, գյուղատնտեսության՝ իբրև արդյունաբերու-

թյան հում նյութի բազայի արագ զարգացման անհրաժեշտությունը, բերքատվության բարձրացումը, շեֆական աշխատանքի և գյուղատնտեսության կոոպերա ման հարցերը: Այս բաժնի հիմնական միտքն է՝ վեր հանել գյուղատնտեսության աճի նշանակությունը արդյունաբերության համար և ընդհակառակը: Ծրագրի յերկրորդ բաժնի հարցերի լուսաբանության ժամանակ անհրաժեշտ է լուսաբանել գյուղի և քաղաքի կապը և կուսակցության ու խորհրդային իշխանության միջոցառումները այդ կապը ամրապնդելու նկատմամբ: Կարևոր է նաև շեշտել, թե վորքան անհրաժեշտ է բանվորական լայն մասսաների մասնակցությունը քաղաքի և գյուղի կապը ամրապնդող բոլոր միջոցառումների մեջ:

Ծրագրի յերրորդ մասը լուսաբանում է կարևորագույն կողմերը ՍՍՀՄ-ի սահմանադրության, վոր ապահովում է բոլոր ազգությունների աշխատավորության իրավունքը խորհուրդների հանրապետությունը կառավարելու նկատմամբ:

Այս բաժնի թեմաները մշակելիս անհրաժեշտ է արծարծել այն միտքը՝ թե տեղական խորհրդների աշխատանքը կանոնավոր տանելու և կենտրոնական իշխանության միջոցառումներն անշեղ գործադրելու համար կարևոր է բանվորական լայն մասսաների մասնակցությունը տեղական խորհրդներին և բանվորա-գյուղացիական լայն խավերի աջակցությունը խորհրդային իշխանության միջոցառումներին: Այս բաժնի յերրորդ թեման՝ «Խորհրդային Միությունը յեղբայրական կապ է հաստատում տարբեր ազգությունների աշխատավորների միջև» — լուսաբանում է կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքականությունը ազգային խնդրում: Տարբեր ազգությունների գյուղացիների ու բանվորների կենցաղից ու կյանքից որինակներ բերելով պետք է ցույց տալ, թե վորքան մեծ նշանակություն ունի յեղբայրական կապը սոցիալաբարության միահամուռ աջակցիլու տեսակետից:

Ծրագրի չորրորդ բաժինը պետք է տա ընդհանուր տեղեկություններ ՍՍՀՄ-ի և կապիտալիստական յերկրների մասին, մեկը մյուսին հակադրելով. ցույց տալ, թե ինչ նշանակություն ունի ՍՍՀՄ այլ յերկրների բանվոր դասակարգի և գյուղացիության հետագա կռիվ համար:

Այստեղ ծանրության կենտրոն պետք է դարձնել ՍՍՀՄ-ի և կապիտալիստական յերկրների փոխհարաբերության ընդհանուր գիծը: Այս բաժնի թեմաները մշակելիս պետք է յերակետ ունենալ առորյա միջազգային կարևոր իրադարձությունները և դրանց հիման վրա վեր հանել կապիտալիստական յերկրների քաղաքականության և բանվոր դասակարգի ազատագրական պայքարի ելույթությունը:

Առաջին թեմայի չորրորդ յենթաթեման՝ «կապիտալիստական յերկրները վարում են թշնամական քաղաքականություն ՍՍՀՄ-ի հանդեպ»՝ պետք է լուսաբանվի այնպես, վոր պատերազմի վտանգը և նրանից բղխող լայն խավերի ինքնապաշտպանության կազմակերպությունը, սոցիալաբարու-

թյունն ամէլի ու ամէլի ամրապնդելու և բանվորների ու գյուղացիների կապը ամուր պահելու անհրաժեշտութիւնն ակնհայտ դառնաւ:

Բայց այս հարցերը քննվում են հասարակագիտական արտադրա-կեն-ցադային տեսակետից, կապելով ընտանիքական տեղեկութիւնների հետ այն չափով, ինչ չափով նրանք շաղկապված են թեմաների բուն բովանդակու-թյան հետ (տես առաջին բաժնի I և II թեմաները, յերկրորդ բաժնում՝ III թեման):

Թեմաների բովանդակութիւնը այնպիսի ծավալով պետք է հաղորդել, վոր անհրաժեշտ ժամեր մնան ունակութիւնների հմտացման ու վարժու-թյունների համար:

Հասարակական-խաղաղական դաստիարակութիւնը հասակավորնե-րի համընդհանրական սարսական դպրոցներում

Աշխատավոր լայն մասսաների վերադաստիարակութիւնը սոցիալա-րության համար է, մասնավորապէս, հասակավորների հարակրթական տարրական դպրոցների սովորողների վերադաստիարակութիւնը՝ կուլտու-րական հեղափոխութեան մարտական խնդիրներից մեկն է:

Անհրաժեշտ է նշել, վոր միջև որս դաստիարակչական մոմենտը վճռական դեր չէր խաղում կիսազրագետների դպրոցներում:

Առաջին տեղը զննելով հասարակա քաղաքական դաստիարակութիւնը, դասատուն պետք է միշտ աչքի առաջ ունենա, վոր մասսաների և մասնա-վորապէս կիսազրագետների դպրոցների սովորողների վերադաստիարակու-թիւնը դասակարգային կռիւի ձևերից մեկն է:

Մեծ մասամբ դրանով էլ բացատրվում է, թե ինչու դպրոցի աշխա-տանքներում և առանձնապէս հասարակա քաղաքական դաստիարակութեան խնդրում վճռական դեր են կատարում հետևյալ մոմենտները. 1) ինտերնա-ցիոնալ դաստիարակութիւնը. 2) 5-ամյակի պրոպագանդն ու ամբողջ դպրոցի և ամեն մի սովորողի մասնակցութիւնը նրա իրագործման մեջ. 3) դպրոցի պոլիտեխնիացումը. 4) յերկրի ինքնապաշտպանութիւնը և 5) հակակրօնական դաստիարակութիւնը:

Դպրոցը՝ իր սխտեմատիկ աշխատանքներով մասնակից դարձնելով կուլեկտիվին կամ առանձին սովորողին ձեռնարկութեան, կուլտեստութեան, խորհրդների, պրոֆմիութեան և այլն հասարակա-քաղաքական արտադրա-կան աշխատանքներին, պետք է դառնա վոչ միայն մասնակիցը, այլև նա-խաձեռնողը բոլոր նոր սկզբնավորութիւններին:

Յուրաքանչյուր թեմա պետք է տա հասարակա-քաղաքական դաստիա-րակութեան համապատասխան ծրագիր:

Հասարակական ունակութիւնների (կազմակերպել, մասնակցել և վա-րել հասարակական պարզ աշխատանքներ) դաստիարակութիւնը հանդիսա-նում է նույնպէս հասարակա-քաղաքական դաստիարակութեան հիմնական

խնդիրներից մեկը: Հասարակական և տեխնիկական ունակութիւնների որգանական կապը—վորպէս ռժանդակ գործոններ դպրոցական ամբողջ աշ-խատանքին, նպաստում է հասարակական ունակութիւնների ամրապնդ-մանն ու խորացմանը:

Քաղժամ

Վերջերս դպրոցական աշխատանքների մեջ կիրառվում է այսպէս կոչ-ված քաղժամը իբրև հասարակա-քաղաքական դաստիարակութեան ձևերից մեկը: Քաղժամը հասարակա-քաղաքական այն զրույցներն են, վոր կանո-նավորապէս տարվում են լիկկայաններում:

Քաղժամի առանձնահատկութիւնն այն է, վոր կանոնավորապէս տար-վում է վորոշ ծրագրային նրան հատկացրած հատուկ ժամերին: Ծրագրի կոն-կրետ իրականացումը կապ ունի այն հարցերի հետ, վորոնք տվյալ մոմեն-տում հուղում են բանվորա-գյուղացիական մասսաներին և այժմեական տում գլուղի համար: Քաղ-են տվյալ արտադրութեան, կուլտեստութեան կամ գլուղի համար: Քաղ-ժամը պետք է շաղկապել գործնական հասարակական աշխատանքի հետ: Դասատուն իր սովորողներին կապում է հասարակական աշխատանքներին և միաժամանակ անց է կացնում քաղժամը հասարակական աշխատանքի շուրջը:

Ունակութիւնների ծավալը

Ծրագրի մեջ մտցված է տեխնիկական ունակութիւնների անհրա-ժեշտ միջիմուռը՝ լեզվի, հաշիւի, քարտեզի, գրքի և լրագրի հետ աշխատանք կատարելու վերաբերյալ: Այդ ունակութիւնների մշակումը պետք է կա-տարվի ծրագրային թեմաների բովանդակութեան, գրական ընթերցանու-թեան նյութերի հետ: Ինքնին հասկանալի չէ, վոր տեխնիկական ունակու-թիւնների մշակումը հնարավոր է և կարեւոր կատարել նաև լրացուցիչ նյութերով՝ սովորողների պրոֆեսիոնալ-կենցաղային կյանքից վերցրած, յեթե այդ նյութերը մատչելի և հետաքրքիր են կիսազրագետ հասակա-վորին:

Լեզվական ունակութիւնների ծավալը նախատեսված է այնքան, վոր հնարավորութիւն տրվի հանրակրթական տարրական դպրոցն ավարտողին կարգալ ու ըմբռնել հանրամատչելի գրքեր, լրագրներ, գրավոր արտահայտել իր մտքերը՝ բանվորական կյանքին անհրաժեշտ գործնական գրութիւններ:

Լեզվական ունակութիւնները բաժանվում են հետևյալ մասերի.

1. Ընթերցանութեան ունակութիւններ.
2. Աշխատանք գրքի և լրագրի հետ.
3. Բանավոր խոսքի դարգացում.
4. Ուղղագրութիւն.
5. Գրավոր խոսքի ունակութիւն:

Ուղղագրական ունակութիւնները մեջ մտնում են դոգմատիկ վարժութիւնները:

Կիսագրագետների դպրոցը ձգտում է դրավորը դարձնել վոչ թե բացարձակապես անսխալ, այլ դյուրընթեռնելի: Այդ պատճառով էլ ծրագրի մեջ մտցրած են միայն ուղղագրական ունակութիւնների այն տարրերը, վորոնք նպաստում են առաջագրած նպատակի իրագործմանը (տես ուղղագրական ունակութիւնների ծավալը):

Հաշվի ունակութիւններից դպրոցը պետք է սովորեցնի թվաբանական չորս գործողութիւններ ամբողջ թվերով և այդ բոլորը կիրառել գործնական կյանքում:

Թվաբանական վարժութիւնների նյութ պետք է ծառային թեմաների հիմնական բովանդակութիւնը, ինչպես նաև լրացուցիչ թվական նյութեր սովորողների շրջապատից: Դպրոցի հիմնական նպատակը հաշվի նկատմամբ այս է՝ սովորեցնել կիսագրագետին հասկանալ գրքի, լրագրի, պարզ գեկուցումների և նախահաշիվների թվական լեզուն և անել ինքնուրույն հաշիվներ, վորոնք անհրաժեշտ են բանվորին նրա պրոֆեսիոնալ-հասարակական աշխատանքում:

Մետրական չափերի ծանոթութիւնը կատարվում է ամբողջ դասընթացի ընթացքում: Յեթե բարեհաջող պայմաններ կան — հետաքրքրութիւն սովորողների կողմից, ուժեղ խումբ, ապա ավելացվում է տասնորդական և հասարակ կոտորակներ, դիագրամներ և տոկոսներ այն ծավալով, վոր տարրական դպրոցն ավարտողը կարողանա հասկանալ գրքի, լրագրի, տեղեկատվի այլ թվական արտահայտութիւնները:

Ծրագրի մեջ մտցրած է քարտեզի վրա աշխատանք կատարելու ունակութիւններ: Տալ վորոշ տարածական ունակութիւններ, կնշանակի հնարավորութիւն տալ կո կրեա գաղափար կազմելու մեր ժողովրդական տընտեսութիւն և այլ յերկրների մասին:

Վերջինս մանավանդ շատ կարեւոր է լրագրի նյութը հասկանալու համար:

Ծրագրային նյութերի բաշխումն ըստ թեմաների յեկ պարապմունքների

Դասաւորվի աշխատանքը հեշտացնելու և ծրագրիւր պարզացնելու համար ամբողջ նյութը բաշխվում է ուսումնական պլանի միջև:

Ամեն թեմա ունի յենթաթեմաներ իրենց կոնկրետ բովանդակութեամբ (տես 17—38):

Ամեն պարապմունք պիտի ընթանա հետևյալ ծրագրով: 10 րոպե՝ թեմայի բովանդակութիւնը աշակերտների փորձի և դասաւորի ասածների հիման վրա, մշակումը կատարելով աշակերտների միջոցով՝ 70 րոպե՝ լեզվական աշխատանք, 60 րոպե՝ հաշիվ և 40 րոպե՝ աշխատանք քարտեզի, գրքի և լրագրի հետ:

Աւխասանքի մեթոդները

Հասարակա-քաղաքական դաստիարակութիւնը, սոցմրցակցութիւնը, հասարակա-քաղաքական աշխատանքը, հասարակական և տեխնիկական ունակութիւնների որպանական կապը, այդ բոլորը միասին պետք է մեր քառային դպրոցը դարձնեն աշխատանքի ակտիվ մեթոդներով՝ սոցշինարաքութիւն մեթոդների դպրոց:

Մեր կիսագրագետների դպրոցի հիմնական խնդիրը մեթոդների տեսակետից դարգացման ներկա ետապում պետք է համարել ուսումնական պրոցեսի շաղկապը հասարակա-քաղաքական դաստիարակութիւն հետ (մանկավարժական միասնական պրոցես): Այդ յերկու շրջանների անջատումը հնարավորութիւն չի տա դպրոցին թողնելու հին ուղիները, իսկ հասարակա-քաղաքական դաստիարակութիւնն ու հասարակա-քաղաքական աշխատանքը կկտրվեն դպրոցի հիմնական խնդիրներից:

Նոր մեթոդները, սոցշինարարութեան մեթոդները, վորոնցով շնչում է ՍՍՀՄ ի ամբողջ արտադրական ու հասարակական կուլտուրական կյանքը և վորոնք ապահովում են շխարարութեան մեր հաջողութեանները, պետք է դառնան կիսագրագետների դպրոցների աշխատանքի ամենորոյա մեթոդներ՝ ամբողջ ուսումնական պրոցեսի ու հասարակա-քաղաքական աշխատանքի մեթոդներ: Այդ մեթոդներն են՝ սոցմրցակցութիւն, հարվածային բրիգադներ, ինքնաքննադատութիւն, այցեր, կոնկուրսներ, «արշավանքներ», դուտարարութիւն և այլն: Սոցշինարարութեան այդ մեթոդները, շաղկապված մանկավարժութեան մեջ ընդունված ակտիվ մեթոդների հետ (ինքնուրույն աշխատանք, նախագծային (պրոբկտների) մեթոդ, ողակային սխտեմ և այլն) հնարավորութիւն կտան մեր դպրոցը դարձնելու վերակառուցման շրջանի դպրոց:

Ծանոթութեւն.— Ինքնին հասկանալի յի, վոր այս կամ այն ակտիվ մեթոդի կիրառումը կախված է շրջապատից, ինչպես նաև սովորողների տվյալ խմբակի անհատական ունակութիւններից:

Ներկա ծրագիրը միայն ընդհանուր գծերով է սրված

Հարկավոր է այն հարմարացնել տեղական պայմաններին (տեղագրական առանձնահատկութիւններ, խմբի կազմը ըստ սեռի, հասակի, գրագիտութեան չափի) և ըստ այնմ վերամշակել թե բովանդակութիւնը և թե ունակութիւնները: Պարապմունքները տարվում են կոմպլեքսային սխտեմով: Թեմաների և յենթաթեմաների վերաձաղումը յերակետ պիտի ունենա տեղական նյութերն ու աշակերտների փորձը: Թեմաների և յենթաթեմաների բովանդակութիւնը պարզելու համար սկզբից տրվում են հարցեր, վորոնք ցույց են տալիս ուսանողին, թե անհրաժեշտ է ողտագործել տեղական պայմաններն ու սովորողների փորձը և այդպիսով անցնել մասնավորից քնդհանուրին, մոտիկից — հեռուն: Վերցնենք, որինակ, ծրագրի առաջին

բաժնի յերկրորդ թեման՝ յերկրի ինքուստրացումը և արդյունաբերութեան աճը: Առաջին յենթաթեմայի բովանդակութեանն է՝ «արդյունաբերութեան տեսակները, նրա վերականգնման և մշակման ընթացքը վերջին տարիներում»: Յերրորդ բաժնի թեման՝ «տեղական խորհուրդներն իրագործում են սոցիալաբարութեան խնդիրները» սկսվում է այն հարցից, թե ինչ և անում տեղական խորհուրդը: Տեղական նյութերը մտնում են ամբողջ ծրագրի մեջ ընդհանուր հարցերի հետ միասին: Միաժամանակ ամեն մի ընթերցանութեան հոգված, անկախ նրա բովանդակութենից, պետք է ոգտագործվի կուլակի դասակարգային հարձակումները, հակակրոնական պրոպագանդը և այլն պարզելու համար:

Հիմնական մոմենտը, վոր հաշվի պետք է առնի դասատուն, դա սովորողների կազմն է:

Նայած թե ովքեր են սովորողները՝ հյուսվածքագործ, հանքագործ, շինարար և այլն բանվոր, թե տնային բանվոր, տնայնագործ — և ըստ այնմ էլ տարբեր է լինում լրացուցիչ նյութն ու ձևափոխվում է աշխատանքի մեթոդը:

Պրոֆմիութեան անդամների հետ պարապելիս սիստեմատիկորեն պետք է ոգտագործել պրոֆմիութեան լրագրերը, պարբերաթերթերը, ինչպես նաև անհրաժեշտ է կապ հաստատել ֆաբրիկաների հետ, ստանալ նրանցից և ոգտագործել տեղական արտադրական և պրոֆմիութեանական նյութեր:

Այն ռայոններում, ուր կենտրոնացած է հյուսվածքային արդյունաբերութեանը, պետք է ավելի մանրամասն կանգ առնել տնտեսութեան այդ ճյուղի վրա, իսկ մյուսներն, ընդհակառակը, ավելի քիչ խորացրած անցնել. վառելիքի տեղերում և հանքավայրերում, իհարկե, նպատակահարմար է ավելի խոր ուշադրութեան դարձնել այդ ճյուղերին, իսկ մյուսներն անցնել լոկ ընդհանուր գծերով:

Յուրաքանչյուր յենթաթեմայի բովանդակութեանը կցված են վորոշ ունակութեաններ — գործնականում, սակայն, միշտ չի կարելի պահպանել խիստ հաջորդականութեան:

Սակայն ունակութեանների վորոշ բաշխում անհրաժեշտ է, վորովհետև դա ցույց է տալիս դասատվին մի կողմից, թե ինչ գծով է տարվելու ունակութեանների մշակումը հիմնական նյութի հետ կապված, մյուս կողմից էլ պարզ կլինի, թե վորքան ժամանակ է գործադրվելու այս կամ այն ունակութեան ամրապնդմանը: Այս կողմերին դասատուն հատուկ ուշադրութեան է դարձնելու: Դասատվութեան ընթացքում ունակութեանների յետ ու առաջ տանելը հնարավոր է ու անհրաժեշտ՝ նայած խմբի զբաճանաչութեանն ու առաջադիմութեանը:

Հասակավորների հանրակրթական դպրոցների աշխատանքների հաջողութեանը միայն ծրագրերից կախված չէ: Կարևոր նշանակութեան ունեն ծրագրային նյութի մշակման մեթոդները:

Մենք արդեն մատնանշեցինք մանկավարժական պրոցեսի սկզբունքներից մեկը, այն է՝ ոգտագործել տեղական նյութերն ու սովորութեանները:

քի փորձը, մի հանգամանք, վոր նպաստում է դասատվութեան դիտողականութեանն ու կոնկրետացմանը:

Մեր դպրոցների դասավանդման հիմնական թերութեանն այն է, վոր գերիշխում է բառային մեթոդը:

Դասատուն ավանդում է «բառային ճամարտութեաններ», առաջարկում է սովորողներին կարգալ աշխուհ հոգվածը, դրի առնել վորոշ դարձված, լուծել թվաբանական որինականեր, առանց հաշվի առնելու հասակավորների պահանջներն ու ցունկութեանները: Մի խոսքով ամեն ինչ բղխում է դասատվից. սովորողները հաճախ մեքենայաբար կատարում են այն ամենը, ինչ վոր դասատուն առաջարկում է: Այդպիսի դասավանդման հետևանքն այն է լինում, վոր նյութը յուրացվում է մեծ դժվարութեամբ և ձեռք բերած ունակութեաններն էլ հաստատուն չեն լինում:

Մեթոդիկայի հիմնական պահանջներն են.

1. Դասավանդութեանը կատարել կոնկրետ նյութով: Ամեն մի նոր բան պետք է շաղկապվի սովորողների դիտողութեանների և կենսական փորձի հետ: Ամեն մի նորութեան պետք է հնարավորութեան տա սովորողներին հեշտ ըմբռնելու կուսակցութեան և խորհիշխանութեան խնդիրները. ճշտել ու համակարգել սովորողների փորձը:

2. Ամեն մի նոր ունակութեան պետք է ինքնուրույն մշակման յենթարկվի սովորողների կողմից աչքի, ականջի և մոտորական գործողների աշակցութեամբ:

3. Յուրացրածն ու վերամշակածը պետք է շաղկապվի սովորողների արտադրա-քաղաքական աշխատանքների հետ:

Միայն այս յերեք աստիճանն անցնելով հնարավոր է ունակութեանների յուրացումը դարձնել ամուր և հաստատուն:

Հետևապես բավական չէ միայն լավ պատմելը, կարգալն ու գրելը տված թեմայի շուրջը, անհրաժեշտ է դարձնել սովորողների մեջ ակտիվ յուրացում և քննական վերաբերում ավանդվող նյութերին: Պետք է հնարավորութեան տրվի մի շարք վարժութեաններով ամրապնդելու սովորածը: Ստուգման ամենալավ միջոցը այդ ունակութեանների գործադրութեանն է կյանքում:

Աշխատանքի վորակի բարձրացման անհրաժեշտ պայմանը աշխատանքների նախադրումն ու հաշվառքն է, վոր դասատուն պիտի կատարի ամեն մի աշխատանքի նկատմամբ սովորողների մասնակցութեամբ:

Խորհուրդ ենք տալիս դասատվին իր պարապմունքների համար ոգտագործել զբաղեցրած դպրոցի 1929/30 թ. ծրագիրը:

Յերկբառ բառերի՝ յա, յո, յու, ույ, այ, ոյ կրկնությունն և յ հնչյունը ձայնավորների մեջ՝ պայուսակ, դասակարգային և այլն։
Հարցական նշան, ստորակետ, միջակետ։
Առողջանության և դրուժյան տարբերություն՝ մարդ — մարթ, աղջիկ — ախջիկ։ Ոժանդակ բառերի առանձին գրելը՝ գրում եմ և այլն։

յե. Գրավոր ունակություններ

Մշակած դարձվածներին և հատվածներին արտագրությունն։
Տրված հարցերի կարճ գրավոր պատասխան, կապված դասի մշակման կամ հասարակ հարցաթերթի գրության հետ (նախորոք խմբով մշակելով, գրատախտակին գրելով)։
Կազմել տված բառերից նախադասություններ (կոլլեկտիվորեն)։
Ինքնուրույն գրավոր պատասխան կարճ դարձվածներին ձևով, կապված կարդացած հոդվածի, թեմայի մշակման և հարցաթերթի հարցերի հետ։
Գրել հարցերի ձևով փոքրիկ պատմվածք նախորոք կազմած ծրագրով։
Տված բառերից կազմել փոքրիկ պատմվածք (կոլլեկտիվորեն)։
Կազմել ինքնուրույն դիմում, հավատարմագիր, ստացական, նամակ, կարճ զեկուցում կատարած աշխատանքի մասին, ծրագիր ապագա աշխատանքի մասին, յեղևտային պարզ տեղեկագիր, նախահաշիվ, հաշիվ և այլն։

զ. Մաթեմատիկական հասկալությունների համակարգական սարակական դպրոցներում

Կարգալ-գրել յերկանիշ-յեռանիշ թվեր։
Կարգալ-գրել յեռանիշ-քառանիշ թվեր՝ վերջը և մեջը զերոներով։
Դասակարգել և նրանց փոխադարձ կապը։ Պարզ կոտորակներ կարգալ-գրել՝ $\frac{1}{4}$, $\frac{1}{2}$, $\frac{1}{8}$ ։
Յեռանիշ և քառանիշ թվերով գումարում՝ հետզհետե բարդ դիպվածքներով։
Գումարման և հանման բանավոր հաշվի հնարները—100-ի շրջանում։
Ջերոնների գումարը, զերոյի և թվի գումարը։
Յեռանիշ և քառանիշ թվերի հանում, հետզհետե պարզից բարդ դիպվածներին անցնելով։
Հանումն, յերբ հանելին և նվազելին վերջանում են զերոներով։
Գումարումն և հանումն հնգանիշ և վեցանիշ թվերով։ Գիաբաժնիների ընթերցում։
Կարգալ-գրել թվեր միլիոնի շրջանում։ Գումարումն և հանումն կամավոր մեծության թվերի սահմանում։ Թվերի կլորացումը։ Կարգալ գրել տասնորդական կոտորակներ (տասնորդական, հարյուրերորդական)։
Միանիշ թվերի բազմապատկման հնարները 100-ի շրջանում։ Բազմապատկման աղյուսակ։

2. Ժ Ր Ա Դ Ի Ր

1. ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՆ ՈՒ ՀԱՁՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ա) Ընթերցանություն

Դանդաղ կարգալ փոքր հոդվածներ, յուրաքանչյուր բառը պարզ արտասանելով։
Դարձվածների վերջը և վերջակետի մոտ ձայնն իջեցնել և կանգ առնել։
Հարցական առողջանություն դարձվածքների մեջ։
Գտնել կարդացած հոդվածի կամ հատվածի հիմնական միտքը։

բ. Ասխատանք գրի յեվ լրագրի հետ

Ծանոթանալ գրքի անվան հետ (հեղինակ, հրատարակություն, գին)։
Ծանոթանալ գրքի բովանդակության հետ ցանկի միջոցով։
Գտնել գրքի մեջ ուղած հոդվածը ցանկի ոգնությամբ։
Սովորել բառարանից ոգտվել։
Ծանոթանալ լրագրի հետ (անունը, թիվը, խմբագրության հասցեն)։
Ծանոթանալ լրագրի բովանդակության հետ վերնագրերի միջոցով։
Ծանոթանալ լրագրի գլխավոր բաժինների հետ։

գ. Բանավոր խոսքի զարգացում

Հարցերի պատասխաններ՝ կապված թեմայի բովանդակության մշակման, կարդացած հոդվածի կամ հատվածի հետ։
Կարճ պատմվածքներ շրջապատի, կենցաղային, արտադրության կյանքից։
Համառոտ ձևակերպումը կարդացած հոդվածի կամ հատվածի հիմնական մտքի։

դ. Ուղղագրություն

Վերջակետ, գլխատառ բառի սկզբում և վերջակետից հետո։ Հատուկ անունները գլխատառով։

Բազմապատկման կիրառումը գործնականում: Քառակուսի, քառանկյունի մակարդակի չափումը:

Բազմապատկել միանիշ թվերով, հետզհետե հեշտից բարդ որինակների անցնելով: Բազմապատկել, յերբ բազմապատկելու վերջը և մեջը զերո կա:

Բազմապատկել 10-ը 100-ով, 20-ը 30-ով և այլն: Բազմապատկել 200-ը 300-ով և այլն:

Բազմապատկել յերկանիշ թվերով:

Յերկանիշ թվի բանավոր բաժանումը միանիշ թվի վրա: Բաժանումը գործնականում:

Յեռանիշ և քառանիշ թվերի բաժանումը 10 և 100-ի վրա (տասնյակների և հարյուրակներին քանակը): Տոկոսների հաշվելը:

Յեռանիշ և քառանիշ թվերի գրավոր բաժանումը միանիշ թվերի վրա:

Մյնայիսի յեռանիշ և քառանիշ թվերի բաժանումը միանիշ թվի վրա, վոր քանորդը զերոյով վերջանա:

Բազմապատկել թվերը յեռանիշ թվերով:

Բազմապատկել յեռանիշ թվերով, յերբ բազմապատկիչը զերո ունի վերջում:

Բազմապատկել, յերբ բազմապատկելին ու բազմապատկիչը վերջանում են զերոներով:

Ձերոյով վերջացող թվերը բաժանել միանիշ թվերի վրա:

Բաժանել յերկանիշ և յեռանիշ թվերի վրա:

Մետրական չափերն անցնում են ամբողջ դասընթացի միջոցին:

Ե. Աւսարհագրական ունակություններ

Ի՞նչպես են քարտեզի վրա նկարում ջուրը, քաղաքները, գետերը, լեռները, սահմանները:

Աշխարհամասերը:

Գտնել ՎՍՍՀ-ի վարչական քարտեզի վրա ինքնավար հանրապետությունները, շրջանները, գավառները, գավառակները, ռայոնները, գլխավոր քաղաքները, գետերը, լեռները և ծովերը:

Գտնել տուր քարտեզի վրա ԱՍՍՀ-ի գլխավոր հանրապետությունները և գլխավոր քաղաքները:

Գտնել ՍՍՀՄ-ի քարտեզի վրա գլխավոր հանրապետությունները և շրջանները:

Գտնել քարտեզի վրա յեվրոպական գլխավոր պետությունները:

Գտնել կիսագնդերի քարտեզի վրա՝ ՍՍՀՄ գլխավոր հանրապետությունները և կարևորագույն կապիտալիստական յերկրները՝ Անգլիան, Ամերիկան և այլն:

2. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

1. Ժողսն. հետաքննության վերականգնումը յեվ սոցիալառարության 5-ամյա պլանը

ա. Կառուցում ենք սոցիալիստական յերկիր:

Բուրժուական և ազնվական կալվածատիրական Ռուսաստանում բանվորներին ու գյուղացիներին ճնշում էր ցարի ինքնակալությունը:

Ռ՝ւմ ձեռքին ելին ֆաբրիկաներն ու գործարանները ցարական Ռուսաստանում:

Ռ՝վքեր ելին հողի և արտադրության միջոցների տերերը: Բանվորների և գյուղացիների շահագործումը և նրա տեսակները: Գյուղացիների շահագործումը ազնվականների, իշխանների և հողատերականների կողմից ճորտատիրական Ռուսաստանում:

բ. Հոկտեմբերյան հեղափոխության միջոցին բանվորները գյուղացիների դաշնակցությամբ իրենց ձեռքն առան իշխանությունը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ: Բանվորների և գյուղացիների պայքարը կապիտալիզմի դեմ միապետությունը տապալելու և ազատություն հաստատելու համար: 1905 թ. հեղափոխությունը և նրա փորձը: Հունվարի 9-ը և արյունոտ շաբաթը: 1905 թ. հեղափոխության գնահատականը բոլշևիկների կողմից (Լենինի կարծիքը այդ հեղափոխության մասին): Բանվորական շարժման աշխուժացումը: Լենայի կոտորածը 12 թվին: Բանվորների և գյուղացիների ազատագրական շարժման ղեկավարությունը բոլշևիկների կողմից: Իմպերիալիստական պատերազմը և նրա ազդեցությունը բանվորական շարժման վրա: Միապետության անկումն ու բուրժուական իրավադարձերի հաստատումը (փետրվարից — հոկտեմբեր): Ինչո՞ւ բանվորները չկարողացան իշխանությունն իրենց ձեռքն առնել և ինչպես ելին դասավորված դասակարգային ույժերը փետրվարյան հեղափոխությունից հետո: Բանվոր դասակարգի կռիվը սոցիալիստական հեղափոխության համար:

Կոմունիստական (բ) կուսակցության ղեկավար դերը բանվորների և գյուղացիների միացման և բուրժուազիայի դեմ պայքար մղելու գործում: Հոկտեմբերյան հեղափոխությունը: Լենինի դերը Հոկ. հեղափոխության մեջ: Խորհրդային իշխանության առաջին ղեկրիսները, հողերի, բանկերի, ֆաբրիկաների և գործարանների ազգայնացումը: Բանվորների և աշխատավոր գյուղացիների միության ամբապնդումը՝ կապիտալիզմի տապալումը արագացնելու և սոցիալիստական կարգեր հաստատելու համար:

գ. Վրացական մեհեմեթիկներ անջատեցին Հոկտեմբերյան հեղափոխությունից յեվ սեպտեմբեր «անկախ» բուրժուա-ազնվականական-կենյազական իշխանություն:

Բ-9-87885



Ո՞ւ՞մ ձեռքին քնացին ֆաբրիկաներն ու գործարանները: Ինչպես լուծեցին հողային հարցը մենշևիկները: Կալվածատերերի և ազնվականների շահերի պաշտպանությունը: Բանվորների և աշխատավոր գյուղացիների շահագործումը: Մենշևիկները դաշը յեվրոպական բուրժուական յերկրների հետ: Ազգային առեւտրային ու ժողովրդային (պատերազմ Ռսեթիայի, Հայաստանի, Ադրբեջանի, Թյուրքիայի և այլն հետ):

Աշխատավորական մասսաների պայքարը մենշևիկները դավաճանութան դեմ: Բուլեիկները դեռ Վրաստանի և աշխատավորական մասսաներին մենշևիկները լծից ազատելու գործում: Բուլեիկական ասպատակություն Մինգրելիայում, Ռսեթիայում, Դուշեթում և այլն: Խորհրդային իշխանություն հաստատումը Վրաստանում:

դ. Բանվորների յեվ գյուղացիական յայն մասսաների կուլտուրական մա-կարդակի բարձրացումը կոստոյի պայմաններ յերկրի հասարակա-կարգական կյանքը ամրապնդելու յեվ գյուղացեացւթյունը սոցիալիսական ռեյսերին զցելու համար: Ժողովրդական կրթությունն առաջ և աշխատ: Կուլտուրական հեղափոխությունը և մասսաների ակտիվ մասնակցությունը սոցիալիստա-րությանը: Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերափոխու-թյունը: Յերկրի ինդուստրացումը: Գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Սոցիալիստական շինարարության դժվարությունները և նրանց հաղթա-հարման միջոցները: Սոցիալիստական ամրապնդումը և կուլտուրու-թյան ու խորհրդային իշխանության ներկա խնդիրները: 16-րդ համագու-մարի վերջումները յերկրի տնտեսության և կուլտուրական զարգացման տեսլերի մասին:

Հակախորհրդային տարրերը խորհրդների դեմ վարած իրենց թշնա-մական գործնեյություն համար աշխատում են ոգտագործել աշխատավորա-կան վորոշ խավերի քաղաքական և կուլտուրական յետամնացությունը, կրոնական նախապաշարուններին մնացորդները (քահանաները, աղանդավոր-ները—սեկտանտները), հին կուրգերի դաստիարակության մնացորդ ան-վստահությունը աշլ ազգություններին (անտիսեմիտիզմ, շովինիզմ), հին մոտեցումը դեպի կինը, վարպես ստրկի և վոշ ընկերոջ և այլն և այլն:

Այս ամենը հրամայական պահանջ են դնում կուլել այդ նախապա-շարուններին դեմ հակառակ դասակարգերի և խավերի թշնամությունը հաղ-թահարելու և դեպի սոցիալիզմ տանող ճանապարհի բոլոր խոչընդոտները վե-րացնելու համար:

Ռեակտիւթյուններ.

I — 5 Լեզվից. Ծանոթացնել գրքի անվանը, հեղինակի և այլն հետ: Դան-դաղ կարդալ փոքր հոդվածներ, ամեն մի բառը պարզ արտա-սանելով: Բանավոր պատասխան կարդացածի բովանդակությունից բղխող հարցերին: Արտագրել մշակած կարճ նախադասություններ: Գլխատառ գրի սկզբում և վերջակետից հետո:

Հաւից. Կարդալ և գրել յեռանիշ և քառանիշ թվեր՝ վերջը և մեջ-տեղը զերոներ: Դասակարգեր և փոխադարձ կապը: Կարդալ և գրել պարզ կոտորակներ՝ ($\frac{1}{2}$, $\frac{1}{3}$, $\frac{1}{4}$): Գումարման և հանման բանավոր հաշիվ տասի շրջանում:

Աշխատանք փաթեղի վրա. ՎՄԽՀ-ի քարտեզը: Քարտեզի պայմանական նշանները ջրի, ցամաքի, լեռների, հարթությունների և քաղաքների նկատ-մամբ, իր շրջանը, դավառակը, ռայոնը:

2. Յերկրի ինդուստրացումը յեվ արդյունաբերության անը

Արդյունաբերությունը և նրա տեսակները: Արդյունահանող և մշակող արդյունաբերություն: Մշակող արդյունաբերության ձևերը. ֆաբրիկա գոր-ծարանային արդյունաբերություն, մանուֆակտուրային արտադրություն և տնայնագործական արդյունաբերություն: Արդյունահանող արդյունաբերու-թյան ձևերը՝ լեռնային, քիմիակոն և այլն: Արդյունահանող և մշակող ար-դյունաբերության կապը: Տնայնագործական արդյունաբերության և մա-նուֆակտուրային արտադրության ձևերը: Խոշոր ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության առավելությունները մանր արդյունաբերության հան-դեպ: Կատարելագործ տեխնիկայի կիրառումը: Աշխատանքի ռացիոնալի-զացիա: Ինքնարժեքի իջեցումը:

Մեր յերկրի տեխնիկայի յետամնացությունը: Արդյունաբերության վիճակը մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը: Մասնավոր սեփականու-թյուն և բանվոր դասակարգի շահագործումը: Բանվոր դասակարգի ժառան-գեց քաղաքայլած արդյունաբերություն: Ֆաբրիկաների և գործարանների ազգայնացումը և արդյունաբերության բարգավաճումը: Միջոցառումներ արդյունաբերության յետամնացության դեմ և դժվարությունները հաղթա-հարելու համար. տեխնիկայի աճը, խոշոր և մանր ինդուստրիայի զարգա-ցումը: Ծանր ինդուստրիայի ղեկավար դերն առհասարակ և մասնավորա-պես ժողովրդական տնտեսության զարգացման նկատմամբ: Տնտեսության հասարականացած և մասնավոր սեկտորների հարաբերությունը: Ժողտնտե-սության հասարականացած սեկտորի աճը: Պետական, կուլտուրատիվային և մասնավոր առևտրի տեսակարար կշիռը: Ժողտնտեսության յերիշխող դիր-քերը: Խոշոր արդյունաբերու-թյունը, տրանսպորտը, խոշոր խորհտնտեսու-թյունները և այլ պետության ձեռքին գտնվող գյուղատնտեսական ձեռ-նարկներ: Յերկրի սոցիալիստական ինդուստրացումը և խոշոր ֆաբրիկա-գործարանային շինարարությունը մեր առորյա խնդիրներն են:

Ինդուստրացման փոխառությունները: Կարբերի պատրաստումը: Ար-դյունահանող արդյունաբերության զարգացումը և հում նյութի պրոդեմը: Տնտեսման ռեփիլը: Պայքար կորուստների դեմ: Անընդհատ արտադրական շաբաթ: Աշխատանքի 7 ժամյա ուր: Արդյունաբերության ռացիոնալիզա-ցիան: Սոցմրցակցություն և հարվածայնություն: Կուլ վրաբուրակրատիզմի

դեմ: Ինքնաքննադատութիւն: Ընդառաջող պլաններ և նրանց նշանակութիւնը:

Ունակութիւններ.

6 — 9

Լեզվից. Դանդաղ կորդալ կարճ նախադասութիւններ սնցած պարագծունքների որինակով: Բանավոր պատասխան ընթերցանութիւն և թեմաի մշակման հետ կապված: Արտագրութիւն մշակած կարճ հատվածների:

Հաշվից. Կարդալ-գրել յեռանիշ և քառանիշ՝ վերջը և միջը դերո ունեցող թվեր: Դասակարգերն ու նրանց փոխադարձ կապը: Յեռանիշ և քառանիշ թվերի գրավոր գումարումն: Բանավոր հանումն և գումարումն 100-ի շրջանում: Դիագրամների ընթերցում:

Աւստացանք բարեգի վրա. Հարթութիւնների արտահայտութիւնը քարտեզի վրա: Վրաստանի ՍՆՀ այն քաղաքներն ու շրջանները, ուր զարգացած և հյուսվածքային և մետաղաբերական արդյունաբերութիւնը:

Ունակութիւններ.

10 — 13

Լեզվից. Դանդաղորեն կարդալ կարճ նախադասութիւններ, ամեն մի բառը պարզ արտասանելով: Պատասխաններ թեմայի հետ կապված հարցերին: Արտագրութիւն մշակած կարճ հոգվածների: Դիստատո գրի սկզբում և վերջակետից հետո: Դիստատոը հատուկ անուններում:

Հաշվից. Գումարում յեռանիշ և քառանիշ թվերի (գերոնների, դերոյի ու թվանշանների գումարման արդյունքները): Բանավոր հանումն և գումարում 100-ի շրջանում: Մետրական չափեր:

Աւստացանք բարեգի վրա. Դանել քարտեզի վրա ՎՍՀՆ, ԱՍՖՆՀ, ՍՆՀՄ-ը: Հում նյութի արդյունահանութիւնն ռայոնը (հանքեր, բամբակ): Վառելիքի արդյունահանութիւն և արդյունաբերական զարգացման ռայոնները:

Թեմա III. Պրոֆիտութիւններ—կումուլիզմի դպրոցն են:

Յենքաթեմա 1-ին. Պրոֆիտութիւնների խնդիրները պրոլետարիատի ղեկաւորութիւնի շրջաններում հիմնավորապէս տարբերվում են կապիտալիստական յերկրների խնդիրներից:

Բովանդակութիւններ.

Բանվորների շահերի պաշտպանութիւնը պրոֆիտութիւնների հիմնական խնդիրներից մեկը կապիտալիստական կարգերում: Տնտեսական շահերի համար մղվող կռիվը միաժամանակ քաղաքական կռիվ է ընդդէմ կապի-

տալիստական պետութիւն: Կապիտալիստական արտադրութիւնն նպատակը՝ շահույթ ստանալն է: Շահույթի միակ աղբյուրը՝ բանվորների շահագործումն է: Այս պատճառով էլ պրոֆիտութիւնները շահագործված չեն կապիտալիստական արտադրութիւնը: Կապիտալիստական պետութիւնը—բուրժուազիայի գործակաւորն է: Այս պատճառով պրոֆիտութիւնները վոյ թե պաշտպանում են կապիտալիստական պետութիւնը, այլ աշխատում են քանդել այն:

